307	Դասավանդում	Եթե միջնակարգ դպրոցի աշակերտն ընտրի հեռակա ուսուցում, ապա միակ տարբերակը Անկախ ուսուցման ակադեմիան է, թե՞ ոչ:	Անկախ կրթության ակադեմիան հեռակա ուսուցման միակ տարբերակն է:
308	Դասավանդում	Դասասենյակը փոխելու փոխարեն, կարո՞ղ են ուսուցիչները գալ դասարան երեխաների մոտ, քանի որ այդպես վարակը տարածելու ռիսկը ավելի ցածր կլինի:	Անհնար է գտնել 12-16 աշակերտ լրիվ նույն դասացուցակով, որպեսզի մնան 1 դասասենյակում և միայն ուսուցիչները փոփոխվեն:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
309	Դասավանդում	Իմանալով, որ ԲԴՄՇ-ի համայնքը կարող է համացանցային ուսուցում կատարել, հնարավոր է, որ աշակերտներն ավելի շատ ժամ ունենան, քան թե ուսուցիչը դասավանդի նույն դասը փոքր խմբերի համար՝ օրական 2 անգամ: Ես կարծում եմ, որ պետք է ավելի շատ ժամանակ անցկացնել ուսուցչի հետ՝ 2 դաս անձամբ, 2 դաս առցանց, որը կավելացնի կրթական ծրագրի քանակը:	Ավելի լավ կլինի, երբ ուսուցիչը ներկայացնի նոր դասը: Այն հնարավորություն կտա աշակերտին բարելավել ուսումը ուսուցչի դասավանդման հիման վրա:
310	Դասավանդում	Քանի՞ աշակերտ է լինելու յուրաքանչյուր դասարանում, երբ վերադառնանաք հիբրիդ մոդելի:	Դժվար է որոշել, որովհետև այն կախված է թե քանի աշակերտ կընտրի յուրաքանչյուր մոդելը:
311	Դասավանդում	Ի՞նչ է լինելու Բրբենքի մեծահասակների դպրոցին, երբ դպրոցները բացվեն:	Այն կբացվի հիբրիդ կամ հեռակա ուսուցման մոդելով:
312	Դասավանդում	Լրացուցիչ տեղեկություն ստանալու՞ ենք հիբրիդ մոդելի վերաբերյալ:	Ձեր դպրոցի տնօրենը կտեղեկացնի ձեզ մանրամասների վերաբերյալ:
313	Դասավանդում	Ուղարկելու՞ եք ավելի շատ տարբերակներ ունեցող պարտավորվածության հարցաթերթիկ, քանի որ օրական 2.5 ժամը հարմար չէ: Միգուցե՞, լրիվ շաբաթ դպրոցում, մյուս շաբաթը՝ տանը: Հարցաթերթիկը չէր նշում, որ դպրոց ետ գնալը կախված կլինի դասացուցակից:	Ոչ
314	Դասավանդում	Հրամցնելու՞ եք կրտսեր մանկապարտեզի դասընթացներ գարնանային կիսամյակի ընթացքում:	Ոչ
315	Դասավանդում	Եթե ընտրենք հեռակա ուսուցման մոդելը, ապա աշակերտները ըստ կրթական մակարդակի՞ են խմբավորվելու: Ինչպե՞ս եք վարվելու GATE ծրագրի աշակերտների հետ:	Ոչ, որովհետև աշակերտներն ինքնուրույն են աշխատում APEX մոդելի ընթացքում:
316	Դասավանդում	Ե՞րբ է ուրբաթ օրը դառնալու կրթական օր: Այն դեռ տեղի չի ունեցել:	Ոչ, ուրբաթ օրը կմնա նույնը, ինչպես հիմա է:
317	Դասավանդում	Պե՞տք է, որ երեխան հանդերձափոխվի ֆիզկուլտուրայի դասի ընթացքում:	Ոչ, նրանք չեն հանդերձափոխվի ֆիզկուլտուրայի դասը ընթացքում:
318	Դասավանդում	Եթե Անկախ կրթության ակադեմիան 1 դասն ավարտում է 22 օրվա ընթացքում, ապա միջնակարգ դպրոցի աշակերտը 3 դաս կվերցնի՞ 2-րդ կիսամյակի ընթացքում:	Ոչ, նրանք կավարտեն կիսամյակը բոլոր 6 դասերի համար:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Դասավանդում	Հարց	1-ին պատասխան(ներ)
319	Դասավանդում	Հնարավո՞ր է հարցադրում անցկացնել որպես դասարան և որպես առանձին աշակերտ: Օրինակ՝ եթե դասարանի 24 աշակերտից 16-ը ցանկան 100% հեռակա ուսուցում, մնան նույն ուսուցչի հետ, իսկ հիբրիդ մոդել ընտրած մնացած 8 աշակերտը՝ միանա մեկ այլ ուսուցչի հետ: Նույն ուսուցչի հետ մնալու կարևորությունը կազդի մեր որոշման վրա:	Ոչ, այն կճնշի մեր ընտանիքներին և ուսուցիչներին ընտրել հատուկ տարբերակ: Նաև, ուսուցիչների առողջական վիճակը գաղտնի պետք է պահել:
320	Դասավանդում	Եթե աշակերտն ընտրի 100% հեռակա ուսուցում, ապա կարո՞ղ է մասնակցել սպորտային դասերին, օրինակ՝ թենիս:	Ոչ, CIF օրենքները թույլ չեն տալիս Անկախ կրթության ակադեմիայի սաներին մրցել դպրոցի թիմում: Նրանք կարող են պարապել թիմի հետ, բայց չեն կարող մրցումներին մասնակցել:
321	Դասավանդում	Եթե ուրբաթ օրը լրացնեմ հարցաթերթիկը, ապա դպրոցները բացվելու առաջ կարո՞ղ եմ որոշումս փոխել:	Ոչ, ծնողները պետք է որոշեն, թե որն է ամենալավ հարթարկը երեխայի համար: Ձեր որոշումը պետք է մնա ուսումնական տարվա մնացած մասի ընթացքում:
322	Դասավանդում	Կա՞ 3-րդ տարբերակ, որ իմ երեխան մնա մանկապարտեզի նույն ուսուցչի հետ, անկախ այն փաստից, թե նա ընտրել է հիբրիդ, թե 100% հեռակա ուսուցում: Երկու տարբերակում էլ, ես ցանկանում եմ մնալ նույն ուսուցչի հետ:	Ոչ, ունենք միայն 2 տարբերակ և ոչ մեկը չի երաշխավորում նույն ուսուցչի հետ մնալը:
323	Դասավանդում	Եթե ցանկանում եմ մնալ նույն երկլեզու դասավանդման ուսուցչի հետ, ապա պետք է ընտրե՞մ հիբրիդ մոդել:	Ոչ, մենք կվերանայենք արդյունքները և առանձին հանդիպում կնշանակենք երկլեզու ծրագրի համար:
324	Դասավանդում	Երաշխավորո՞ւմ եք, որ եթե հիբրիդ մոդել ընտրեմ, երեխաս կմնա նույն ուսուցչի հետ:	Ոչ, կաշխատենք երեխաներին պահել իրենց ուսուցչի հետ, բայց չենք կարող երաշխավորել:
325	Դասավանդում	Եթե ընտրեմ քիբրիդ մոդելը, կարո՞ղ եմ հետո փոխել հեռակայի և հակառակը:	Ոչ, ձեր որոշումը պետք է մնա ուսումնական տարվա մնացած մասի ընթացքում:
326	Դասավանդում	Հեռակա ուսուցմամբ շարունակողները, կունենա՞ն նոր ուսուցչիչ, թե՞ ոչ:	Հավանական չէ, քանի որ որոշ ուսուցիչներ կարող են ընտրել հիբրիդ մոդել: Ուսուցիչը կարող է դասավանդել կամ հիբրիդ մոդելով, կամ հեռակա:
327	Դասավանդում	Ե՞րբ ենք իմանալու, թե ո՞ր խմբում է տեղավորվել երեխան Ա, թե՞ Բ:	Ոչ, քանի դեռ դասացուցակը և ետ վերադառնալու որոշումը չի հաստատվել:
328	Դասավանդում	Եթե ընտրեմ հեռակա ուսուցում, ո՞վ է լինելու ուսուցիչը՝ ընթացիկ ուսուցիչը, թե՞ նորը:	Անկախ ընտրության, կարող է պատահել, որ նոր ուսուցիչ նշանակվի:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Դասավանդում	Հարց	1-ին պատասխան(ներ)
329	Դասավանդում	Եթե մենք ընտրենք հեռակա ուսուցում տարրական GATE աշակերտների համար, ապա նրանք պետք է նոր ուսուցիչ ունենան՝ խանգարելով ուսման ընթացքը, թե՞ նոր ուսուցիչը կդասավանդի հիբրիդ մոդելի երեխաներին, քանի որ նրանք արդեն փոխում են իրենց մոդելը:	Անկախ ձեր ընտրությունից, երեխան կարող է ունենալ նոր ուսուցիչ:
330	Դասավանդում	Ի՞նչ կլինի եթե մեր որոշումը կախված լինի տարրական դպրոցի ուսուցչի որոշումից՝ դասավանդի հիբրիդ, թե՞ հեռակա մոդելով: Ինչպե՞ս ենք իմանալու այդ մասին:	Անկախ ձեր ընտրությունից, երեխան կարող է ունենալ նոր ուսուցիչ: Ուսուցիչների առողջական վիճակը գաղտնի պետք է պահել:
331	Դասավանդում	Իմ հարցը նման է Լինդզիի հարցին: Կարո՞ղ է շրջանը/ուսուցիչը առաջարկել, թե որ աշակերտն առաջնահերթություն ստանա, քանի որ հեռակա ուսուցումը դժվար է այդ երեխայի համար: Կա՞ն երեխաներ, որոնց դուր է գալիս հեռակա ուսուցումը: Մտածո՞ւ մ եք այդ մասին:	Դպրոց վերադառնալը կախված է առողջապահական պայմաններից, և ոչ թե առանձին աշակերտներից:
332	Դասավանդում	Մտածո՞ւ մ եք հերթափոխ ստեղծել միջնակարգ դպրոցի համար որպեսզի նվազեցնեք շփումը: Առանց դրա վարակված աշակերտը կարող է 2 օրում 100 հոգի վարակել:	Փոքր խմբերի հերթափոխները չեն կարող աշխատել միջնակարգ դպրոցում, որովհետև աշակերտները ունեն տարբեր դասացուցակներ:
333	Դասավանդում	Ի՞նչ է նշանակում «խոցելի» աշակերտներ:	Հատուկ ուսուցում, անզլերեն սովորողներ, անօթևան և ուրիշի տանը ապրող երեխաները
334	Դասավանդում	Ինչպե՞ս եք վարվելու անօթևան աշակերտների առողջական վիճակի հետ: Ի՞նչ է լինելու, եթե չկարողանան օգտվել բժշկական ծառայություններից:	Ուսնողական ծառայությունների բաժինը կապ կհաստատի այդ ընտանիքների հետ:
335	Դասավանդում	Ո՞ր աշակերտներն են մնալու իրենց ուսուցչի հետ: Հիբրիդ մոդել ընտրողները, թե՞ հեռակա ուսուցման:	Անկախ կրթական հարթակի, աշակերտները կունենան նոր ուսուցիչ: Կախված է աշակերտների կատարած ընտրության թվից: Կախված է նաև, թե որ մոդելով է դասավանդելու ուսուցիչը:
336	Դասավանդում	Ինչպե՞ս են հեռակա ուսուցման աշակերտները մասնակցելու երգչախմբի դասերին:	Երգչախմբի աշակերտները կարող են երկակի արձանագրության շնորհիվ վերցնել այդ դասը իրենց դպրոցում:
337	Դասավանդում	Ինչպե՞ս են միջնակարգ դպրոցի աշակերտները մասնակցելու ֆիզկուլտուրայի դասին: Հանդերձափոխվելու են և վազեն դիմակով:	Նրանք չեն հանդերձափոխվի, բայց կարող են հանել դիմակը, եթե հեռու են կանգնած մյուս աշակերտներից:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Դասավանդում	Հարց	1-ին պատասխան(ներ)
338	Դասավանդում	Եթե մնանք 100% հեռակա ուսուցման մոդելով ամբողջ ուսումնական տարվա ընթացքում առողջապահական պայմանների պատճառով և ոչ թե մեր ցանկությամբ, կմնա՞նք աշակերտի ուսուցիչն անփոփոխ:	Կրթական գրասենյակն այդ որոշումը դեռ չի կայացրել:
339	Դասավանդում	Մենք կարող ենք ընտրել մի մոդել, թե՞ դպրոցական շրջանը/դպրոցը կընտրի այն հիմնվելով ամենաշատ ձայն հավաքած մոդելի վրա: Եթե ընտրություն ունենք, ապա ինչպիսի՞ն է լինելու դասացուցակը: Ուսուցիչը միաժամանակ դասավանդելու է հիբրիդ և հեռակա ուսուցման մոդելով:	Հիմնականը հիբրիդ մոդելն է: Կտեղավորենք ուսուցիչներին հեռակա ուսուցման համար հիմնվելով նրանց ընտրության և հեռակա մոդելն ընտրած աշակերտների թվի հիման վրա: Շրջանը պարտավոր է ունենալ հեռակա ուսուցման մոդել:
340	Դասավանդում	Ինչու՞ չբացել փոքր դպրոցները, հատկապես նրանք, որոնք փոքրերի համար են: Հեռակա ուսուցումը իդեալական չէ փոքրերի համար:	Շրջանն աշխատում է դպրոցները բացել բոլոր աշակերտների համար հավասար ձևով:
341	Դասավանդում	Կարո՞ղ ենք սկզբում բացել դպրոցը բարձր դասարանցիների համար, իսկ հետո մանկապարտեզի, 1-ին կամ 2-րդ դասարանների համար: Այդ կերպ կարող ենք տեսնել, թե ինչպես է այն աշխատում:	Շրջանն աշխատում է դպրոցները բացել բոլոր աշակերտների համար հավասար ձևով:
342	Դասավանդում	Սա կրեդիտի մասին չէ: Ինչպե՞ս կարելի է ավարտել մեկ դասը, որը մշակվել է 2 տարբեր կազմակերպությունների կողմից:	2-րդ կիսամյակի յուրաքանչյուր դաս կլինի APEX-ի միջոցով: 22 օրում կավարտեն մեկ դաս, վերցնելով միաժամանակ 1 դաս: Ժամանակը կհերիքի բոլոր 6 դասերն ավարտելու համար:
343	Դասավանդում	Ինչպե՞ս են միջանկյալ դպրոցի աշակերտները շարունակելու 6 կիսատ թողած դասերը և անցնելու Անկախ կրթության ակադեմիային և վերջացնելու միաժամանակ վերցնելով 1 դաս:	2-րդ կիսամյակի յուրաքանչյուր դաս կլինի APEX-ի միջոցով: 22 օրում կավարտեն մեկ դաս, վերցնելով միաժամանակ 1 դաս: Ժամանակը կհերիքի բոլոր 6 դասերն ավարտելու համար:
344	Դասավանդում	Ինչպե՞ս էք գնահատում ուսուցիչների աշխատանքի որակը հեռակա ուսուցման ընթացքում:	Ավանդական գնահատման գործընթացն ուժի մեջ է:
345	Դասավանդում	Հնարավո՞ր է, որ շաբաթը 2 լրիվ օրով գալ դպրոց: Օրինակ՝ Մ-2-րդ դասարանները՝ երկուշաբթի/չորեքշաբթի, 3-5-րդ դասարանները՝ երեքշաբթի/հինգշաբթի և բոլորն իրար հետ ուրբաթ օրը՝ հեռակա ուսուցմամբ:	Դպրոցները բացելու կոմիտեն տարբեր տարբերակներ է քննարկել և կես օրով (առավոտյան/կեսօրից հետո) մոդելը նվազեցնում է վարակման ռիսկը և ճաշի ժամին երեխաների շփումն ու խճողումները, նաև հնարավորություն է տալիս նրանց շաբաթը 4 օր աշխատել ուսուցչի հետ:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
346	Դասավանդում	Քանի որ Անկախ կրթության ակադեմիան ուսուցանում է միաժամանակ 1 դաս, ինչու՞ անձամբ դպրոց հաճախելիս չենք կարող նույնն անել (աշակերտների շփումը նվազեցնելու համար:)	Դպրոցները բացելու կոմիտեն գտնում է, որ ավելի կարևոր է, որ աշակերտները շփվեն բոլոր ուսուցիչների հետ:
347	Դասավանդում	Առանց ուսուցչի ներկայության, գրագողությամբ զբաղվելը հետո է APEX մոդելի ընթացքում: Ինչպե՞ս եք լուծելու այս հարցը և ինչպե՞ս համոզվել, որ աշակերտները սովորում են:	Կրթական ազնվության նույն օրենքները վերաբերվում են APEX ծրագրին: Ծնողները պետք է աշխատեն ուսուցչի հետ գրագողությունը կանխելու համար:
348	Դասավանդում	Ինչպե՞ս են դասավանդվելու կարանտինի մեջ գտնվող երեխաները:	Ուսուցիչն աշխատանք կտրամադրի աշակերտին:
349	Դասավանդում	Եթե աշակերտը տուն է ուղարկվել մեկուսացման համար, կարող է հեռակա կարգով դպրոց հաճախել:	Ուսուցիչը նյութեր կհատկացնի աշակերտի համար, որոնք կարող են լինել առցանց կամ ոչ:
350	Դասավանդում	Պարտավորվածության հարցաթերթիկը այս շաբաթ ենք ստանալու՞ գարնանային կիսամյակի համար: Եթե ընտանիքն ընտրի 100% հեռակա ուսուցում, բայց ցանկանա փոխել իր որոշումը կիսամյակի սկզբին և ստանա հիբրիդ մոդելի ուսուցում և հակառակը: Կարո՞ղ է դպրոցը կատարել այդ խնդրանքը: Շնորհակալություն	Հրաժարականը գարնանային կիսամյակի համար է: Մենք չենք կարող փոփոխություն թույլ տալ, որովհետև շատ դժվար է դասացուցակ կազմելը:
351	Դասավանդում	Զգիտեմ, եթե պատասխանել եք այս հարցին, բայց չեք կարծու՞մ, բացելով դպրոցները հիվանդների քանակը կաճի: Ի՞նչ եք անելու այդ դեպքում:	Այդ դեպքում ետ կգնանք հեռակա ուսուցման:
352	Դասավանդում	Ես տեսնում եմ հիմնական դասերը: Ի՞նչ է լինելու լեզվի, արվեստի, լուսանկարչության, ճարտարագիտության ակադեմիայի և մյուս դասերի հետ 100% հեռակա ուսուցման ընթացքում:	APEX-ն ունի մի քանի ընտրովի դասեր, բայց ոչ բոլորը, որոնք առկա են միջնակարգ դպրոցում: Հիշեցեք, երկակի արձանագրության միջոցով աշակերտը կարող է 2 տնտրովի դաս վերցնել նաև իր շրջանի դպրոցում:
353	Դասավանդում	Միջանկյալ և միջնակարգ դպրոցի դասացուցակն ունի 3 դաս և դասերի միջև 5 րոպե դադար: Որտե՞ղ է այն 10-15 րոպեանոց սննդի դադարը, որի մասին դուք նշեցիք:	Ճաշի ժամ չլինելու դեպքում հավաքներ և խճողումներ չեն լինի: Այնուամենայնիվ, աշակերտը կարող է փոքրիկ խորտիկ բերել իր հետ:
354	Դասավանդում	1-Կարո՞ղ ենք ընտրել հիբրիդ մոդելի հերթափոխը, թե՞ հիմնվելու եք անվատառերի վրա: 2- Ի՞նչ եք անելու, եթե ընտանիքն ունի մի քանի երեխա:	Կախատենք ընտանիքի անդամներին տեղավորել նույն հերթափոխում:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Դասավանդում	Հարց	1-ին պատասխան(ներ)
355	Դասավանդում	Լոս Անջելեսի գավառի դպրոցները հրաժարականի են դիմում ԱՄ-2-րդ դասարանները բացելու համար: ԲԴՄՇ-ն այն ցանկանում է անել: Եթե ոչ, ապա ինչու: Հեռակա ուսուցումը դժվար է փոքր երեխաների համար: Ինչպե՞ս է ԲԴՄՇ-ն առաջնահերթություն տալիս փոքր երեխաներին անձամբ դպրոց վերադարձնելու համար:	Շաբաթական միայն 30 դպրոց է հրաժարական ստանում: Հավանական չէ, որ մենք այն կստանանք մեր բոլոր դպրոցների համար մինչև կիսամյակի վերջը: Մենք կվերանայենք այն, եթե Լոս Անջելեսի գավառը չհասնի դպրոցների բացելու համար անհրաժեշտ կարմիր մակարդակին:
356	Դասավանդում	Հիմնվելով տարրական դպրոցի դասացուցակի վրա, ի՞նչ են անելու երեխաները հերթափոխներից առաջ կամ հետո: Պե՞տք է, որ օրվա դասն ավարտեն հեռակա կարգով, թե՞ անձամբ դպրոց հաճախելը բավական է:	Նրանք կավարտեն ուսումն հեռակա ուսուցմամբ:
357	Դասավանդում	Ի՞նչ է լինելու Apex -ի ընթացքում, եթե հիմա երեխան վերցնում է մաթեմատիկա 6(3) դասը: Նրանք վերցնելու են սովորողական մաթեմատիկայի դաս, թե՞ առաջադեմ դաս:	Նրանք կշարունակեն ավարտել դասընթացը, բայց այն ուրիշ անուն կունենա: Օրինակ՝ փոխարենը, այն կարող է կոչվել մաթեմատիկա 7:
358	Դասավանդում	Եթե երեխան, հիվանդության պատճառով, մնա տանը, ապա պե՞տք է լրացնի բաց թողած դասը, թե՞ հեռակա ուսուցում կատարի:	Նրանք պետք է լրացնեն բաց թողած առաջադրանքները:
359	Դասավանդում	Ինչպե՞ս է երեխան սովորելու 10/14 օրվա կարանտինի ընթացքում: Պե՞տք է անցնի հեռակա ուսուցման, թե՞ լրացնի բաց թողած առաջադրանքները: Ինչպե՞ս կարող ենք քաջալերել աշակերտներին/ծնողներին հիվանդ ժամանակ մնալ տանը և չմտածել կատարյալ հաճախման համար ստացվող պարգևների մասին:	Նրանք առաջադրանք կստանան իրենց ուսուցչից: Եթե ամբողջ դասարանն է, ապա այն կանցնի հեռակա ուսուցման: Աշակերտները պետք է ամեն օր ստուգեն ախտանշանները և չեն կարող դպրոց հաճախել, եթե ախտանշաններ ունեն:
360	Դասավանդում	Ի՞նչ է լինելու 100% հեռակա ուսուցում ընտրած 6-րդ դասարանցիների հետ:	Նրանք կմնան իրենց բնակության դպրոցում և կօգտվեն APEX կրթական ծրագրից:
361	Դասավանդում	Ես ցանկանում եմ, որ իմ երեխան մնա իր ուսուցչի հետ: Կարո՞ղ եմ նախապես իմանալ ուսուցչի դասավանդման պլանները:	Դժբախտաբար ոչ: Մենք չգիտենք, թե որ ուսուցիչն է նշանակվելու ում համար, քանի դեռ չունենք բոլոր տվյալները:
362	Դասավանդում	Կարո՞ղ ենք փոխել մեր որոշումը, եթե նոր տեղեկություն ստանանք:	Դժբախտաբար, մենք չենք կարող որևէ փոփոխություն թույլ տալ:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Դասավանդում	Հարց	1-ին պատասխան(ներ)
363	Դասավանդում	Կարո՞ղ ենք սկսել բարձր դասարաններով, իսկ հետո անցնել ցածր դասարաններին:	Մենք մտածում են, թե ինչպես ետ վերադարձնել բոլոր աշակերտներին, երբ ապահով կլինի:
364	Դասավանդում	Դպրոցները բացելուց, կարո՞ղ է ուսուցիչ դասը վարել իր դասարանից համակարգչի միջոցով և հիբրիդ և հեռակա ուսուցմամբ:	Մենք մտածել ենք այդ մոդելի մասին, բայց շատ դժվարություններ են կապված դրա հետ:
365	Դասավանդում	Քանի՞ աշակերտ է պետք հիբրիդ մոդելն իրականացնելու համար:	Մենք պետք է տվյալներ հավաքենք և վերանայենք դասացուցակները, ճիշտ տոկոսն իմանալու համար
366	Դասավանդում	Ինչպե՞ս է Apex-ը օգնում աշակերտներին շարունակել ուսումը, եթե չեն ցանկանում ետ վերադառնալ դպրոց: Ամենալավ ձևը կլինի թույլ տալ նրանց մնալ իրենց դասընկերների հետ հեռակա ուսուցման դասարանում և ուսուցիչը դասավանդի Ջումի միջոցով միաժամանակ ամբողջ դասարանին:	Մենք հետազոտել ենք Ջումի մոդելը հիբրիդ մոդելի համար: Շատ դժվարություններ են կապված այդ մոդելի հետ:
367	Դասավանդում	Նույնիսկ Լոս Անջելեսի ԴՄՇ-ն այն չի քննարկում: Ինչու՞ այստեղ:	Մենք ցանկանում ենք պատրաստ լինել, երբ հնարավոր կլինի ապահով կերպ բացել դպրոցները:
368	Դասավանդում	Ինչպե՞ս եք որոշելու, թե ով որ հերթափոխում է լինելու հիբրիդ մոդելի ընթացքում:	Մենք կաշխատենք հավասարակշռել դասարանների չափերը:
369	Դասավանդում	Կտեղավորվե՞ն ընտանիքի երեխաները նույն հերթափոխում: Դա իմ հույսն է:	Կփորձենք ընտանիքի երեխաներին դնել նույն հերթափոխում:
370	Դասավանդում	Ի՞նչ կլինի, եթե իմ երեխան ուզում է սպորտով զբաղվել, բայց տառապում է իմունային անբավարարվածությամբ:	Մեզ հարկավոր է նրա բժշկի առաջարկությունը:
371	Դասավանդում	Հիբրիդ մոդելը նույն է լինելու ինչ որ առաջարկել էիք մայիս և հունիս ամիսներին՝ առավոտյան և կեսօրից հետո հերթափոխով, երկուշաբթիից մինչև հինգշաբթի:	Այո
372	Դասավանդում	Ինչու՞ է մի ամբողջ օր միայն հեռակա ուսուցմամբ: Մա դժվար է աշխատող ծնողների համար:	Այո
373	Դասավանդում	Եթե հիվանդ երեխան իրեն լավ է զգում մեկուսացման մեջ, կարո՞ղ է հեռակա ուսուցում վերցնել:	Այո
374	Դասավանդում	Մա նշանակում է, որ մարզիկները պե՞տք է ընտրեն հիբրիդ մոդելը և ոչ թե հեռական:	Այո, եթե ցանկանում են մասնակցել սպորտային մրցումների: CIF-ը թույլ չի մրցել, եթե Անկախ կրթական ակադեմիայում են արձանգրված:
375	Դասավանդում	ILA/Apex-ը հեռակա ուսուցման միակ մոդելն է:	Այո, դա միայն տարբերակն է:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Դասավանդում	Հարց	1-ին պատասխան(ներ)
376	Դասավանդում	Եթե առողջապահական պայմանների պատճառով չկարողանանք ետ վերադառնալ դպրոց- ապա ամեն ինչ նույնը կմնա, ինչպես հիմա: հեռակա ուսուցման մոդել և ոչ թե Անկախ ուսուցման ակադեմիա (ILA):	Այո, այն կմնա այնպես, ինչպես որ հիմա է:
377	Դասավանդում	Պարզաբանելու համար. միջնակարգ դպրոցի 100% հեռակա ուսուցում ընտրողների ՄԻԱԿ տարբերակը Անկախ կրթության ակադեմիան (ILA) է և երկակի արձանագրություն, մինչև 2 ընտրովի դաս իր դպրոցում անձամբ վերցնելու համար):	Այո, դա ճիշտ է:
378	Դասավանդում	Եթե ընտրենք Անկախ կրթության ակադեմիան (ILA) հեռակա ուսուցման համար, ապա պե՞տք դուրս գալ բնակության շրջանի դպրոցից:	Այո, նրանք կարձանագրվեն Անկախ կրթության ակադեմիայում (ILA):
379	Դասավանդում	Հիբրիդ մոդելի ընթացքում, նույն ընտանիքի անդամները կլինեն նույն հերթափոխում (որինակ կեսօրից հետո):	Այո, այդ հարցը տրված է ծնողի պարտավորվածության հարցաթերթիկում:
380	Դասավանդում	Պարտավորվածության մեր որոշումը վերջնական է, թե կարող եք փոփոխել շաբաթներ/ամիսներ հետո:	Դուք պետք է որոշում կայացնեք և այն վերջնական է լինելու ուսումնական տարվա մնացած մասի ընթացքում:
381	Դասավանդում	APEX-ը կրթական շատ ձանձրալի մեթոդ է: Հնարավոր է իրական դասեր ստանալ մինչև այս տարբերակի ընտրություն կատարելը:	Կարող եք տեղեկություն փնտրել համացանցում APEX ծրագրի վերաբերյալ: Կայքում տրված են դասերի օրինակներ:
382	Դասավանդում	Ինչու՞ օգտվել Անկախ կրթության ակադեմիայից (ILA), երբ կարելի է մնալ նույն ֆորմատի վրա: Նոր ուսումնական ծրագիր, անձանոթ ուսուցիչներ: Փորձու՞մ եք հուսահատեցնել մեզ, որ չընտրենք հեռակա ուսուցում:	Մենք պետք է մշակենք յուրաքանչյուր դպրոցի գլխավոր դասացուցակ, իսկ հետո առանձին դասացուցակ հիբրիդ մոդելի և առանձին դասացուցակ հեռակա մոդելի համար: Այն շատ դժվար է կատարել մինչև դեկտեմբեր ամիսը: Մենք չենք կարող կատարել բոլորի ցանկությունները:
383	Դասավանդում	6-րդ դասարանի Apex ծրագիրն ունի՞ իսպաներեն լեզվի երկլեզու ուսուցման դասեր:	Ոչ
384	Դասավանդում	Կարո՞ղ եք տալ Անկախ կրթության ակադեմիայի AP դասերի ցուցակը:	APEX-ի կայքում տեղադրված է դասընթացների ցուցակը: Մեր աշակերտների ընտրած AP դասերի մեծ մասը հրամցվում է այդ ծրագրի միջոցով:

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
385	Դասավանդում	Միջնակարգ դպրոցում, հնարավոր է աշակերտների փոխարեն ուսուցիչները փոխեն դասարանը, շփումը նվազեցնելու համար: Գիտեմ, որ դժվար է դասացուցակն այդպես դասավորել, բայց հնարավոր է: Հնարավոր է խմբավորել աշակերտների ըստ դասերի. 1-2-3 և 4-5-6:	Անհնար է գտնել 12-16 աշակերտ լրիվ նույն դասացուցակով, որպեսզի մնան 1 դասասենյակում և միայն ուսուցիչները փոփոխվեն:
386	Գործող բաժին	Ի՞նչ կասեք 2-րդ դասարանից ցածր աշակերտների մասին: Նրանք պետք է իրենք մաքրեն նստարանները:	Հավաքարարները կմաքրեն նստարանները դասերի միջև:
387	Գործող բաժին	Պե՞տք է 12-րդ դասարանցիները ավտոկայանատեղի դիմումնագիր լրացնեն մինչև հունվար ամիսը, եթե ետ վերադառնան դպրոց:	Դեռ ոչ: Եթե վերադառնանք, տնօրենները կտեղեկացնեն 12-րդ դասարանցիներին դրա մասին:
388	Գործող բաժին	Որտե՞ղ են սնվելու երեխաները: Դրսու՞մ:	Եթե հնարավոր է դրսում կամ իրարից հեռու մնալով:
389	Գործող բաժին	Հնարավոր է նորից EBT ստանալ:	Դա վերաբերվում է Կալիֆոռնիայի նահանգին և դաշնային կառավարությանը:
390	Գործող բաժին	Ինչպե՞ս կարող է երեխան իմանալ, թե քանի հոգի կա զուգարանում:	Կլինեն միջանցքների վերահսկիչներ:
391	Գործող բաժին	Մաքրության պատճառով, կարո՞ղ է փակեք մի քանի դաս: օրինակ՝ երաժշտություն, ֆիզկուլտուրա	Ոչ
392	Գործող բաժին	Ինչպե՞ս են երեխաները հեռավորություն պահպանելու մի դասարանից մյուսն անցնելիս:	Կլինեն միջանցքների վերահսկիչներ:
393	Գործող բաժին	Պե՞տք է ծնողը սպասի երեխայի հետ, մինչև չափեն ջերմությունն ու լրացնեն հարցաթերթիկը:	Չսպասելու համար, դուք ինքներդ, տանը կարող եք չափել նրանց ջերմությունը և ստուգել ախտանշանները:
394	Գործող բաժին	Ինչպե՞ս եք իմանալու, ինչքան ժամանակ է երեխան անցկացնում զուգարանում և երբ է վերադառնում դասարան:	Վերահսկիչները կհսկեն զուգարանները:
395	Social Emotional	Երեխաների հոգեկան առողջության համար կլինե՞ն միջոցառումները նրանց ապահով կերպ միասնության բերելու համար:	Մենք աշխատում ենք առողջապահական հրահանգներ մշակել պարապմունքների համար:
396	Սոցիալ հուզական	Ի՞նչ կասեք սպորտի մասին: Կսկսվե՞ն պարապմունքները:	Մենք աշխատում ենք առողջապահական հրահանգներ մշակել պարապմունքների համար:
397	Սոցիալ հուզական	Ի՞նչ որ մի բան անելու եք վերադարձը հեշտացնելու համար:	Այո

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
398	Սոցիալ հուզական	Կբացվե՞ն արտադասարանական խմբակները հիբրիդ մոդելի ընթացքում:	Այն կախված է առողջապահական հրահանգներից:
399	Սոցիալ հուզական	Կարո՞ղ են միջանկյալ դպրոցի աշակերտները մասնակցել դպրոցի միջոցառումներին, եթե ընտրեն 100% հեռակա ուսուցում:	Այն կախված է առողջապահական հրահանգներից:
400	Սոցիալ հուզական	Սպորտ. Աշնանային խաղերը տեղափոխվել են դեկտեմբեր: Դուք ասացիք, որ չեք կարող սկսել հիբրիդ մոդելը մինչև հունվար: Եթե (երբ) Լոս Անջելեսի գավառը հասնի կարմիր մակարդակի, թույլ կտա՞ք սպորտով զբաղվել, եթե դպրոցները չեք բացել հիբրիդ մոդելով:	Մենք պատրաստվում ենք ետ քերել պարապմունքները, որպեսզի աշակերտները պատրաստ լինեն մրցել զարնանը: Մեր ներկայացումն ընդգրկում է հրահանգներ, հրաժարականներ և վերապատրաստում մարզիչների համար:
401	Սոցիալ հուզական	Միջնակարգ դպրոցի աշակերտների համար – ինչպե՞ս եք վարվելու սպորտային միջոցառումների հետ հիբրիդ մոդելի ընթացքում:	Մենք աշխատում ենք հրահանգներ մշակել առողջապահական գրասենյակի առաջարկների հիման վրա: Վերապատրաստում ենք նաև մարզիչներին: Սրա ավարտից հետո կսկսենք դանդաղորեն աշակերտների պարապմունքները, որպեսզի կարողանան մրցել զարնանը: Կհետևենք նույն հրահանգներին, եթե զարնանը աշակերտները կարողանան մրցել:
402	Հատուկ ուսուցում	Ես կարծում եմ, որ Հատուկ ուսումնա՞ն ծնողները պետք է տեղեկացվեն ՄԻՆՉԵՎ ուրբաթ օրվա հարցաթերթիկին պատասխանելը: Եթե նրանց հիբրիդ մոդելը տարբեր է, մենք պետք է ՆԱԽԱՊԵՍ իմանանք դա:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946
403	Հատուկ ուսուցում	Ճիշտ է, որ Հատուկ ուսուցման աշակերտները դպրոց են վերադառնալու նոյեմբերին:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946
404	Հատուկ ուսուցում	Ո՞ն է հաշմանդամ աշակերտների «ծրագիրը»:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946
405	Հատուկ ուսուցում	Նմա՞ն է տարրական դպրոցի մոդելը հատուկ ուսուցման մոդելին:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946
406	Հատուկ ուսուցում	Հատուկ ուսուցումը կունենա՞ առավոտյան/կեսօրից հետո հերթափոխ, քանի որ նրանց դասարաններն արդեն փոքր են:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946
407	Հատուկ ուսուցում	Շատ հետաքրքիր է, թե ինչպիսի՞ն է լինելու LEAP ծրագրի հիբրիդ մոդելը: Քանի որ դասարանը փոքր է, նորից բաժանվելու՞ են խմբերի: Կբավականացնի՞ աշխատակազմը 2 հերթափոխի համար:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946

ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 2

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
408	Հատուկ ուսուցում	Հատուկ կարիքներ ունեցող երեխաները, ովքեր ընդհանրապես ունեն օգնականներ, կունենա՞ն իրենց օգնականներն իրենց հետ նույն դասարանում:	Այո
409	Հատուկ ուսուցում	APEX-ը կազմի՞ EIP ունեցող աշակերտների վրա:	IEP թիմը կհանդիպի և կվերանայի անհրաժեշտ հարմարությունները:
410	Հատուկ ուսուցում	Հիբրիդ մոդելը նույնը կլինի՞ հատուկ ծրագրերի ծառայություններ ստացող երեխաների համար (օրինակ՝ LEAP, Stepping Stones և այլն): Կունենան առավոտյան և կեսօրից հետո հերթափոխներ:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946
411	Հատուկ ուսուցում	Տարբեր կլինի՞ Հատուկ ուսուցման դասացուցակը ընդհանուր կրթության դասացուցակից:	Խնդրում ենք հյուրընկալել. https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7946